

**ՀԱՐԿԵՐԻ ԱՆՀԱՎԱՔԱԳՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ 50% ՍԿԶԲՈՒՆՔԻ  
ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
(ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ)**

**Մամիկոնյան Կ.Հ.**

Փորձաքննությունների ազգային բյուրո,  
Երևան, Հայաստան

Ներկայումս ՀՀ-ում գործող հարկման դրույքաչափերը ոչ օպտիմալ ծանրաբեռնվածություն են ստեղծում տնտեսվարող սուբյեկտների համար, իսկ պետության տեսանկյունից՝ նշված իրավիճակը ծնունդ է տալիս նաև հարկերի անհավաքագրելիության խնդրին:

Հողվածում ներկայացվում է հարկման դրույքաչափերի հավասարակշռության սկզբունքի կիրառմամբ հարկման արդյունավետության գնահատականի որոշման մեթոդական մոտեցում: Հետազոտությունում առանցքային է համարվում «հավասարակշռության 50%» սկզբունքի կիրառումը, որն իսկզբանե ընկած է Ա. Լաֆերի հարկման պրոգրեսիվության և բյուջեի հարկային եկամուտների միջև կախվածության գաղափարի հիմքում՝ հայտնի «Լաֆերի կոր» անվանմամբ: Համաձայն վերջինիս՝ որքան բարձր են հարկման սահմանային դրույքները, այնքան հարկ վճարողների կողմից հարկերից խուսափելու արդյունքում ընդլայնվում է տնտեսության ստվերային հատվածը:

Ներկայացված մեթոդական մոտեցումը հիմնված է ձեռնարկատիրության հարկման դեպքում և՛ տնտեսվարող սուբյեկտի և՛ պետության կողմից «առավելագույն օգուտ» ստանալու գաղափարի վրա, սակայն որի դեպքում առավելապես կայուն կհամարվի այն ընդհանուր արդյունքի նվազագույնը, որից առավել կողմերից ոչ մեկ չի կարող օգուտ ստանալ՝ առանց մյուսների ռազմավարությունների փոփոխության:

**Բանալի բառեր.** հարկային բեռ, հարկման դրույքաչափ, Նեշի հավասարակշռություն, ընդհանուր օգուտի նվազագույն արժեք, շահութահարկ, ԱԱՀ, ձեռնարկատիրության հարկում:

**Ներածություն**

Սույն աշխատանքի շրջանակներում քննարկվել է առաջին հերթին հարկային բեռը, քանի որ զարգացող երկրի, ինչպիսին, օրինակ, կարող է համարվել Հայաստանի

---

Թղթակցական հասցեն՝ Մամիկոնյան Կարեն Հովհաննեսի, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ, տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների բաժնի փորձագետ, Հայաստան, ք.Երևան, Իսակովի պող., 24, e-mail: mamikonyankaren@gmail.com

Հանրապետությունը, հարկային համակարգը բնորոշվում է որպես կայուն և զարգացող, եթե հարկային բեռը բաշխվում է հիմնապես արդարության և արդյունավետության սկզբունքներով: Երբ վերը նշված սկզբունքներից որևէ մեկը դառնում է նախընտրելի, խախտելով նժարների հավասարակշռությունը, փոքրանում է մյուսի լիարժեքորեն կիրառման հնարավորությունը:

Պետք է նկատի ունենալ, որ հարկման արդյունավետության գնահատականի հարցը մինչ օրս վերջնական լուծում չի ստանում: Այսինքն, թե հարկատուի եկամտի որ մասի գանձումն է արդյունավետ՝ կան բազմաթիվ մոտեցումներ և հիպոթետիկ հաշվարկներ: Ողջ տնտեսության համար առավել ընդունված է հարաբերական հարկային բեռի քանակական գնահատումը, որն էլ որոշվում է՝ ընդհանրական հարկային եկամուտների մուտքերի և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեծության հարաբերակցությամբ [1, c. 38-53], իսկ կազմակերպության համար՝ պլանային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցուցանիշով: Այդուամենայնիվ, ՀՀ-ում հարկային եկամուտների դինամիկան, ինչպես նաև հարկային բեռի հարաբերակցությունը համախառն պահանջարկի նկատմամբ թույլ են տալիս եզրակացնել, որ տնտեսության վրա հարկային ծանրաբեռնվածության զգալի բարձրացումը որոշակի չափով հանգեցնում է հարկերի հավաքագրման կրճատմանը [2]:

2023 թվականի տվյալներով, օրինակ, ՀՀ տնտեսության համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) բացարձակ արժեքով կազմել է 9,453.2 մլրդ. ՀՀ դրամ (23,633.0 մլն. ԱՄՆ դոլար), իսկ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 2,221.9 մլրդ. ՀՀ դրամ (5,554.75 մլն. ԱՄՆ դոլար) [3]: Այսպիսով, ըստ վերը բերված պաշտոնական ցուցանիշների «հավաքագրված հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը կազմել է 23.5 տոկոս: Սակայն, մեր դիտարկմամբ, այստեղ անհրաժեշտ է քննարկել նաև հետևյալ խնդիրը, այն է՝ նշված մոտեցմամբ հաշվարկներ իրականացնելու դեպքում հարկման իրական վիճակն արտացոլել հնարավոր չէ, եթե հաշվարկին մասնակից չի դարձվում հարկային մուտքերի պահուստ հանդիսացող հարկային ապառքների ներուժը, որի հաշվառման և միջազգային համեմատությունների պարագայում պատկերն էապես կարող է փոխվել [4]: Նշված վերջին տվյալը պետական բյուջեի հարկային եկամուտներին գումարելու պարագայում 2023 թվականի հարաբերական հարկային բեռի ցուցանիշը կստացվի 24 տոկոս:

Մեր դիտարկմամբ ՀՀ-ում հարկերից խուսափելու հիմնական պատճառը ներկայիս տնտեսական պայմաններում բարձր հարկային բեռն է, այսինքն՝ ուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեության հարկման բարձր դրույքաչափերը. նախ դա բացատրվում է նրանով, որ դրանք որոշելիս թերևս դժվար է հստակ հաշվի առնել ողջ տնտեսության իրական արտադրողական ներուժի հնարավորությունները, և հետո՝ հարկման դրույքաչափերը թերևս սահմանվել են արտասահմանյան որոշ երկրներում գործող հարկման դրույքաչափերին մոտ: Այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական վիճակը, և հատկապես՝ ըստ շերտավորվածության հասարակության կենսամակարդակը հետազոտական և գիտամեթոդական ասպեկտում հաշվի առնելը լրջագույն բարդություններ է ենթադրում [5]:

**Գրականության ակնարկ**

Ջեյմս Միրլիսը իր «An Exploration in the Theory of Optimum Income Taxation» (1971) գիտական հոդվածում առաջարկել է մի մոդել, որտեղ հարկային քաղաքականությունը պետք է հաշվի առնի այն հնարավորությունը, որ քաղաքացիները կարող են դիտավորյալ թաքցնել իրենց իրական եկամուտները, եթե հարկային դրույքաչափերը չափազանց բարձր են: Մոդելը վերաբերում է օպտիմալ հարկման խնդիրներին՝ հաշվի առնելով եկամուտների թաքցնումը և տնտեսվարողների գործադրած ջանքերի փոփոխությունը՝ ի պատասխան բարձր հարկային դրույքաչափերի [6]:

Ինչ վերաբերում է ստվերային տնտեսությանը, ապա պետք է փաստել, որ վերջինիս ազդեցությունը հարկային եկամուտների նվազման վրա անխուսափելի է, և որպես ստեղծված իրավիճակին կարճաժամկետ հակազդեցություն՝ պետությունը կարող է բարձրացնել հարկման դրույքաչափերը, ինչը սակայն երկարաժամկետ հեռանկարում կարող է հակառակ էֆեկտ ունենալ: Իրականում կան բազմաթիվ պատճառներ, որոնք խրախուսում կամ ստիպում են բիզնեսին ստվերում աշխատել: Այսինքն, շատ դեպքերում դա տեղի է ունենում ոչ թե ընտրությամբ, այլ անհրաժեշտությամբ: Ի դեպ, ըստ առանձին հետազոտողների հաշվարկների 2019-2023 թվականների տվյալներով ՀՀ-ում ստվերային տնտեսության միջին ցուցանիշը տատանվում է ֆորմալ ՀՆԱ-ի 23-ից 27 տոկոսի միջակայքում, ինչն անշուշտ խոսում է ՀՀ-ում բարձր ստվերային տնտեսության մասին [7]:

Իրականությունն այն է, որ ՀՀ-ում յուրաքանչյուր ժամանակաշրջանին համապատասխան տնտեսվարող սուբյեկտների մի ստվար զանգված օբյեկտիվորեն կամ ոչ օբյեկտիվորեն չի կարողանում կրել առկա հարկային բեռը (հարկերը թաքցվում են), ինչի պատճառով էլ տեղի է ունենում հարկերի թերհավաքագրում: Փաստորեն, այս տնտեսվարողների համար ընտրության տարբերակներն են՝ կամ իրականացնել ստվերային գործարքներ, կամ դադարեցնել իրենց գործունեությունը, կամ էլ՝ լինել ազնիվ հարկ վճարող, սակայն կուտակված հարկային պարտավորությունների պատճառով հայտնվել սնանկության գործընթացում: Արդարության համար պետք է նշել, որ կան նաև տնտեսվարողներ այնպիսիք, ովքեր ի վիճակի են, սակայն չեն ցանկանում ամբողջությամբ կրել հարկային բեռը. նշվածը թերևս կախված է տվյալ սուբյեկտների կողմից դրսևորվող բիզնեսի հոգեբանությունից [8, էջ՝ 122]:

Համարվում է, որ տնտեսության ստվերային հատվածի դեմ պայքարի հիմնարար մեթոդներից մեկը՝ հարկային բեռի էական նվազեցումն է, ինչը դրսևորվում է արտոնությունների սահմանման, և հիմնականում՝ հարկման դրույքաչափերի կրճատման միջոցով: Պետական ծախսերի կրճատման պարագայում տեղի է ունենում արտադրության ծավալների պակասեցում, հետևապես՝ նվազում է արձանագրում ՀՆԱ-ի ցուցանիշը: Տրամաբանորեն, պետական ծախսերի ավելացման և հարկման դրույքաչափերի կրճատման միջոցով պետությունը խթանում է ՀՆԱ-ի աճը: Մեր դիտարկմամբ, կարող է առաջ քաշվել այն համարձակ գաղափարը, ըստ որի՝ երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի կայուն վերընթացն ապահովելու նպատակով թերևս անհրաժեշտ չէ հարկման դրույքաչափերի հետ

կապված ճկունություն ցուցաբերել տնտեսության ակտիվացման կամ անկման տարբեր փուլերում տեղի ունեցող տնտեսական գործընթացներում, այլ անհրաժեշտ է հարկման դրույքաչափերի հավասարակշռության հետագիծ թողնող ռազմավարություն մշակել և գործարկել՝ երկարաժամկետ հեռանկարում այն անփոփոխ թողնելու պայմանով:

Ի հակադրություն վերը նշվածի, պետք է ընդծել, որ ներկայումս ՀՀ-ում ընդհակառակը՝ փաստացիորեն 2025 թվականի հունվարից կրկնակի է դարձվել փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգում գործող հարկման դրույքաչափերը, իսկ հովիսից մասնագիտական ծառայությունների հարկումը բերվել է ընդհանուր հարկման դաշտ՝ այսպիսով հող ստեղծելով ապագայում փոքր և միջին ձեռնարկատիրությանը ևս առավել բարձր դրույքաչափերով՝ ԱԱՀ-ով և շահութահարկով հարկման դաշտ ներքաշելու համար:

Վերոնշյալ խնդրի վերաբերյալ պարզորոշ է դառնում, որ ՀՀ հարկային համակարգը պահանջ ունի տնտեսության ստվերային հատվածի դեմ պայքարում կիրառել հարկային բեռի օպտիմալ կառավարման հիմնարար մեթոդներ, որոնց շարքում կարող է իր տեղն ունենալ ստորև առաջարկվող «Հարկային դրույքաչափերի հավասարակշռության» մեթոդական մոտեցումը: Նշված գաղափարը կարող է նաև ծառայել երկարաժամկետ հեռանկարում պետության կողմից ՀՆԱ-ի աճի ապահովման գործընթացի համար:

### **Մեթոդաբանություն և տվյալներ**

Նորբեյյան մրցանակակիր Ջոն Նեշը 20-րդ դարի 50-ականների սկզբին ձևակերպեց իր հայտնի «Նեշի հավասարակշռություն» հայեցակարգը՝ ոչ անտագոնիստական խաղերում, որը հետագայում դարձավ խաղերի ամբողջ տեսության համար առանցքային: Համաձայն այս հայեցակարգի՝ *«Կոնֆլիկտի մասնակիցները պետք է օգտագործեն օպտիմալ ռազմավարություն, որը հանգեցնում է կայուն հավասարակշռության ստեղծմանը. խաղացողների համար ձեռնտու է պահպանել այս հավասարակշռությունը, քանի որ ցանկացած փոփոխություն կվարթարացնի նրանց դիրքը»* [9, c. 12]:

Ներկայացվող հարկման դրույքաչափերի հավասարակշռության գաղափարի հիմքում վերաձևակերպվել է հենց այս հայեցակարգային սկզբունքը, ըստ որի՝ «Կոնֆլիկտի մասնակից կողմերը երբ ձգտում են «առավելագույն օգուտ» ստանալ, առավելապես կայուն կհամարվի այն ընդհանուր արդյունքի նվազագույնը, որից առավել կողմերից ոչ մեկը չի կարող օգուտ ստանալ՝ առանց մյուսների ռազմավարությունների փոփոխության»:

Այդուամենայնիվ, քննարկվող խնդրո պարագայում անհրաժեշտ է ընտրել հարկային դրույքաչափերի պայմանական ռազմավարություններում ՀՀ ՊԵԿ-ի օգուտի նվազագույն կետերը, որոնք կհամարվեն տնտեսվարող սուբյեկտի վնասի նվազագույն կետեր, ինչպես նաև՝ տնտեսվարող սուբյեկտի օգուտի առավելագույն կետերը, որոնք կհամարվեն ՀՀ ՊԵԿ-ի վնասի առավելագույն կետեր:

Թերևս հատկանշական է այն փաստը, որ ըստ ձեռնարկատիրական գործունեության հարկման ընդհանուր համակարգում շահութահարկի և ԱԱՀ-ի միասնական հարկման

դրույքով ծանրաբեռնվածության մի շարք զարգացած պետությունների և ՀՀ համեմատական տվյալների՝ ծանրաբեռնվածության ամենացածր ցուցանիշն ունի Ճապոնիան՝ 33 տոկոս, որից հետո՝ Գերմանիան՝ 38 տոկոս և Հայաստանը նույն չափով՝ 38 տոկոս (շահութահարկը 18 տոկոս, ԱԱՀ-ն 20 տոկոս, կամ շահույթի մեջ 34.67 տոկոս): Այլ երկրներում ձեռնարկատիրական գործունեության հարկման դրույքով ծանրաբեռնվածությունը կազմում է, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում՝ 45 տոկոս, ԱՄՆ-ում՝ 45 տոկոս, Ֆրանսիայում 45 տոկոս, Կանադայում՝ 53 տոկոս, Իտալիայում՝ 46 տոկոս և այլն [10, էջ՝ 79]:

**Արդյունքներ և քննարկումներ**

Սույն հետազոտությունում հարկման դրույքաչափերի հավասարակշռության սկզբունքի կիրառմամբ հարկման արդյունավետության գնահատականի որոշման մեթոդական մոտեցման շրջանակներում ներկայացվող ՀՀ-ում շահութահարկի և ԱԱՀ-ի միագումարային հարկման դրույքի ստորին սահմանն ընդունվել է 34 տոկոսը (Շահութահարկ-16, ԱԱՀ-18 նվազագույն դրույքաչափերի միագումար), քանի որ ըստ Ա. Լաֆերի՝ օպտիմալ դրույքաչափն արդեն իսկ սկսվում է եկամուտների հարկման 35 տոկոսից:

Այստեղ հարկ է նշել, որ Ա. Լաֆերի հարկման պրոգրեսիվության և բյուջեի հարկային եկամուտների միջև կախվածության գաղափարի հիմքում իսկզբանե ընկած է «հավասարակշռության 50%» սկզբունքը, որը հայտնի է «Լաֆերի կոր» [11, p. 218] անվանմամբ: Վերջինիս համաձայն որքան բարձր են հարկման սահմանային դրույքները, այնքան հարկ վճարողների կողմից հարկերից խուսափելու արդյունքում ընդլայնվում է տնտեսության ստվերային հատվածը [12]: *Այս հիպոթեզի էությունն այն է, որ բյուջե գանձման սահմանային դրույքը եկամտի գումարից պետք է հավասար լինի 30 տոկոսի, իսկ օպտիմալ դրույքաչափը տարանվի 35-ից 40 տոկոսի սահմաններում* [13]: Հարկ է նշել այստեղ, որ ըստ Յու. Անանիաշվիլիի և Վ.Պապավայի հետազոտությունների՝ իրականում այն տնտեսությունների համար, որտեղ միջին հարկային դրույքաչափի փաստացի արժեքը գերազանցել է 30%-ը, լիովին թույլատրելի է, որ օպտիմալ համարվի հարկային 35-37 տոկոսանոց դրույքաչափը [14, c. 104]:

Վերոգրյալ սկզբունքի համաձայն եկամուտների գանձման 40-50 տոկոս դրույքաչափի պայմաններում բյուջեի մուտքերի աճը սկսում է դանդաղել, իսկ երբ դրույքաչափը բարձրանում է 50 տոկոսից, որն անվանվել է «արգելված գոտի», նկատվում է ոչ միայն բյուջեի մուտքերի, այլև խնայողությունների և ներդրումների կտրուկ նվազում: Սա նշանակում է, որ մինչև 50 տոկոս հարկման դրույքաչափի դեպքում բյուջեի մուտքերը մեծանում են, իսկ նշված սահմանաչափը գերազանցելը հանգեցնում է հարկերի թերհավաքագրման՝ նույնիսկ հարկային հարաբերությունների սուբյեկտների հարկային բեռի ավելացման պայմաններում [15]:

Հարկ է նշել, որ Լաֆերի կորը [16] էմպիրիկորեն հաստատվել է ԱՄՆ-ում վերջին 100 տարիների ընթացքում առնվազն երեք անգամ՝ 1920թ.-ին, 1960թ.-ին և 1980թ.-ին [17], իսկ բացի ԱՄՆ-ից նաև Միացյալ Թագավորությունում 1980թ.-ին, Իռլանդիայում 1990թ.-ին և

այլն: Պետք է այստեղ արձանագրել, որ Լաֆերի կորի գործողության միջոցով ցույց է տրվում հենց երկրի տնտեսական աճի ցուցանիշի բարելավումը:

Փաստորեն, համաձայն վերոնշյալ տեսության կողմնակիցների, հարկերի համապատասխանաբար ցածր դրույքաչափերը նպաստում են հարկերի հավաքագրմանը, ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը և ներդրումային ակտիվության աճին [18, p. 53–64]:

Հաջորդիվ ներկայացվում է հարկման դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների առանձին խմբերի տվյալների վերլուծության դեպքում ստացված արդյունքները:

Տնտեսվարող սուբյեկտի շահութահարկի և ԱԱՀ-ի դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների խմբի դեպքում.

- *Ընդամենը արժեքը հարաբերելով ռազմավարությունների թվին՝  $438/12 = 36.5$ : Ստացված միջին ցուցանիշից բարձրը կհամարվի վնաս, իսկ ցածրը՝ օգուտ:*

«Հավասարակշռության 50%» սկզբունքի համաձայն՝ խմբում ընդհանուր օգուտի նվազագույն արժեքը կկազմի՝  $(37+36) \times 50\% = 36.5$ :

Տնտեսվարող սուբյեկտի եկամտային հարկի և սոցիալական վճարի դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների խմբի դեպքում.

- *Ընդամենը արժեքը հարաբերելով ռազմավարությունների թվին՝  $270/12 = 22.5$ : Ստացված միջին ցուցանիշից բարձրը կհամարվի վնաս, իսկ ցածրը՝ օգուտ:*

«Հավասարակշռության 50%» սկզբունքի համաձայն՝ խմբում ընդհանուր օգուտի նվազագույն արժեքը կկազմի՝  $(23+22) \times 50\% = 22.5$ :

Տնտեսվարող սուբյեկտի շրջանառության հարկի դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների խմբի դեպքում.

- *Ընդամենը արժեքը հարաբերելով ռազմավարությունների թվին՝  $218.5/9 = 24.3$ : Ստացված միջին ցուցանիշից բարձրը կհամարվի վնաս, իսկ ցածրը՝ օգուտ:*

«Հավասարակշռության 50%» սկզբունքի համաձայն՝ խմբում ընդհանուր օգուտի նվազագույն արժեքը կկազմի՝  $(26.5+23) \times 50\% = 24.75$ :

### **Եզրակացություն**

Սույն հետազոտությամբ ստացված թվաբանական հաշվարկների արդյունքների համադրումների վերջնական փուլում ընտրվել են *ընդհանուր օգուտի նվազագույն արժեքներին* համապատասխանող այն ռազմավարությունները, որոնց դեպքում դրույքաչափերի ՀՀ ՊԵԿ-ի օգուտը տնտեսվարող սուբյեկտի օգուտից նվազագույնն է՝ հաշվի առած պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների մեջ առանձին հարկերի մասնաբաժինները: Նշված սկզբունքներին համապատասխանող հարկման դրույքաչափերը ստացվել են հետևյալ կերպ.

Հաշվի առնելով, որ հարկային եկամուտների մուտքերում ԱԱՀ-ի մասնաբաժինն ավելի շատ է քան շահութահարկինը, վերցվել է ընտրվածներից միագումարային ՀՀ ՊԵԿ-ի

օգուտում ԱԱՀ-ի ցածր դրույքաչափով տողը, իսկ տնտեսվարող սուբյեկտի օգուտում՝ ԱԱՀ-ի բարձր դրույքաչափով խումբը.

–«Շահութահարկ – 19 տոկոս, ԱԱՀ – 18 տոկոս»:

Հաշվի առնելով, որ հարկային եկամուտների մուտքերում եկամտային հարկի մասնաբաժինն ավելի շատ է քան սոցիալական վճարինը, վերցվել է ընտրվածներից միագումարային ՀՀ ՊԵԿ-ի օգուտում եկամտային հարկի ցածր դրույքաչափով տողը, իսկ տնտեսվարող սուբյեկտի օգուտում՝ եկամտային հարկի բարձր դրույքաչափով խումբը.

–«Եկամտային հարկ - 18 տոկոս, սոցիալական վճար - 5 տոկոս»:

Հաշվի առնելով, որ հարկային եկամուտների մուտքերում շրջանառության հարկում առևտրից շրջանառության հարկի մասնաբաժինն ավելի շատ է քան մյուս ուղղությունները, վերցվել է ընտրվածներից միագումարային ՀՀ ՊԵԿ-ի օգուտում առևտրից շրջանառության հարկի ցածր դրույքաչափով խումբը, իսկ տնտեսվարող սուբյեկտի օգուտում առևտրից շրջանառության հարկի բարձր դրույքաչափով խումբը.

–«Առևտրից շրջ. հարկ - 6 տոկոս, արտադրությունից շրջ. հարկ - 4 տոկոս, այլ գործունեությունից շրջ. հարկ - 6 տոկոս, հանրային սննդից շրջ. հարկ - 7 տոկոս»:

Այսպիսով, ներկայումս ՀՀ-ում գործող բիզնեսի հարկման տարբեր դրույքաչափերը ոչ օպտիմալ ծանրաբեռնվածություն են ստեղծում տնտեսվարող սուբյեկտների համար, և հետևաբար, պետության տեսանկյունից՝ նշված իրավիճակը ծնունդ է տալիս նաև հարկերի անհավաքագրելիության խնդրին: Սույն հետազոտության գործնական նշանակությունը կայանում է հատկապես ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության հարկման օպտիմալ ծանրաբեռնվածությունը որոշելու մեջ:

### Գրականության ցանկ

1. Александрова Е.А., Подходы к расчету и оценке налоговой нагрузки / Экономический журнал 4 (52), ст. 38-53.
2. Voskanyan M.A., Galstyan A.G. Assessment of the Impact of Fiscal Policy on Economic Growth in the Republic of Armenia. Finance: Theory and Practice. 2023;27(4):104–117 (URL:https://doi.org/10.26794/2587-5671-2023-27-4-104-117).
3. ՀՀ ՊԵԿ գործունեության 2023 թ.-ի տարեկան հաշվետվություն:
4. Սաֆարյան Ա.Գ., Արդյունավետ հարկային քաղաքականության մշակման և իրականացման խնդիրները // Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական տեղեկագիր, N2 2013
5. Кирина Л. С., Горохова Н. А. Налоговый менеджмент в организациях. М.: Издательство Юрайт, 2014.
6. Mirrlees J., "An Exploration in the Theory of Optimum Income Taxation", 1971.
7. «ԼՈՒՅՍ հիմնադրամ», ՀՀ սովետային տնտեսության գնահատումը հարկային համակարգի տեսանկյունից, 15 հունիսի 2020: Մովսիսյան Քնքուշ, «ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» -

ատենախոսություն 2024:

8. Մամիկոնյան Կ., Գալստյան Է., Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկատիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում / ՀՀ ԳԱԱ «փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», համար 10. 2023, էջ՝ 122:
9. Вартанов С. А., Ивин Е. А., Прикладная теория игр для экономистов. – МГУ им. М.В.Ломоносова - Вологда: Вол.НЦ РАН, 2020.
10. Մամիկոնյան Կ., Մելքոնյան Ա., Հարությունյան Ա., Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը (փորձագիտական կարծիք), ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», համար 11. 2024:
11. Laffer A., Meiselman D. The Phenomenon of Worldwide Inflation. American Enterprise Institute for Public Policy Re, 1975.
12. Laffer A., Moore B.S. and Tanous P.J., The End of Prosperity: How Higher Taxes will Doom the Economy – if We Let it Happen. New York, Threshold Editions. 2008.
13. Кравченко И.А., Налоговые реформы 80-х годов в США, социально-экономический аспект, М., НИФИ, 1989, ст. 9-10.
14. Ананиашвили Ю., Папава В., Налоги и макроэкономическое равновесие, Лафферо-кейнсианский синтез, Стокгольм, 2010.
15. Боброва А.В., Налоговое бремя в предпринимательстве, Вестник ЮУрГУ, № 22, 2012.
16. Laffer A. The Laffer curve: past, present, and future / A. Laffer // Backgrounder. The Heritage foundation. - 2004. - Vol. 1765.
17. Laffer A. B., A Special Introduction, in President Ronald Reagan’s Initial Actions Project. New York, Threshold Editions. 2009.
18. Becsi Z. The Shifty Laffer Curve // Federal Reserve Bank of Atlanta. Economic review. 2000. Vol. 85, No(URL:[https://www.researchgate.net/publication/5025629\\_The\\_shifty\\_Laffer\\_curve](https://www.researchgate.net/publication/5025629_The_shifty_Laffer_curve)).

## **ПРОБЛЕМА НЕДОСБОРА НАЛОГОВ И ПРИМЕНЕНИЕ ПРИНЦИПА 50% РАВНОВЕСИЯ НАЛОГОВЫХ СТАВОК В НАЛОГОВОЙ СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

***Мамиконян К.О.***

*В настоящее время действующие в Республике Армения налоговые ставки создают неоптимальную нагрузку для хозяйствующих субъектов, а с точки зрения государства эта ситуация также порождает проблему недосбора налогов.*

В статье представляется методический подход к определению оценки эффективности налогообложения с применением принципа равновесия налоговых ставок. Применение принципа «50% баланса» считается ключевым аспектом данного исследования, которое изначально основывается на концепции Артура Лаффера о взаимосвязи прогрессивного налогообложения и налоговых доходов бюджета, широко известной как «кривая Лаффера». Согласно этой концепции, по мере увеличения предельных налоговых ставок возрастает и объем теневой экономики из-за уклонения налогоплательщиков от уплаты налогов.

Указанный подход основан на идее получения «максимальной выгоды» как государством, так и хозяйствующим субъектом при налогообложении предпринимательской деятельности. Однако в данном случае наиболее устойчивым будет считаться тот минимальный общий результат, от которого ни одна из сторон не сможет извлечь больше выгоды без изменения стратегий других сторон.

**Ключевые слова:** налоговая нагрузка, налоговая ставка, равновесие Нэша, минимальное значение общей выгоды, налог на прибыль, НДС, налогообложение предпринимательства.

## THE ISSUE OF TAX UNDERCOLLECTION AND THE APPLICATION OF THE 50% TAX RATE EQUILIBRIUM PRINCIPLE IN THE TAX SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

**Mamikonyan K.**

*Currently, the existing tax rates in the Republic of Armenia create an optimal burden for business entities, and from the state's perspective, this situation also gives rise to the problem of tax undercollection.*

*The article presents a methodological approach to determining the assessment of taxation efficiency through the application of the principle of tax rate equilibrium. This approach is based on the idea of achieving "maximum benefit" for both the state and business entities in the context of taxation. However, in this case, the most stable outcome is considered to be the minimal overall result from which neither side can gain more without changing the strategies of the other sides.*

**Keywords:** tax burden, tax rate, Nash equilibrium, minimum overall benefit, profit tax, value added tax, business taxation.

Ներկայացվել է խմբագրության 14.05.2025

Ընդունվել է տպագրության 10.09.2025